Հավելված N 7
2026 թվականի հունվարի 26-ին կնքված
N «ԴՏՊ-1160-11012/ԱՀԵԾ-7/26» պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում»

Համառոտ բովանդակությունը՝ Խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում Վարդենիսի տարածաշրջանում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում

Հաշվետու ժամանակաշրջան՝ *2026թ Առաջին եռամսյակ*

| | Իրականացված գործողություններ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ակնկալվող արդյունքները | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր | Փաստացի մատուցած ծառայություններ | Մեկնաբանություն |
| | - Բազմամասնագիտական թիմի կողմից կատարվել է շահառուների կարիքների գնահատում, որի հիման վրա կազմվել են անհատական պլաններ, ժամանակացույց:- Յուրաքանչյուր մասնագետ և խմբակավար կատարել է գրառում շահառուների անհատական և խմբակային պարապմունքների մասին: Կատարվել են անհատական և խմբակային պարապմունքներ, ժամանցային, սպորտային խաղեր, միջոցառումներ: Շահառուների անվտանգությանը և ինքնազգացողությանը անընդհատ հետևել է բուժքույրը: Աշխատակիցները ներկայացրել են ամենամսյա հաշվետվություն ծրագրի համակարգողին: | Ծառայությունների և խմբակների պարապմունքների արդյունքում շահառուների մոտ բարելավվել են մտավոր ունակությունները և մասնագիտական հմտությունները: | Բազմամասնագիտական թիմի բոլոր անդամներն ունեն շահառուների հետ կատարվելիք աշխատանքների թեմատիկ պլանավորում և դրանց կատարողականի օրագիր, որտեղ զետեղված են անհատական և խմբային պարապմունքների արդյունքները: Անընդհատ կատարվել են | Տրամադրվել են սոց աշխատողի, հոգեբանի, հատուկ մանկավարժի, լոգոպեդի ծառայություններ: Շահառուները մասնակցել են կարպետագործության, շյուղագործության, գոբելենագործության, փայտամշակման, կար ու ձևի, համակարգչային հմտությունների տիրապետման խմբակների պարապմունքներին և ձեռք են բերել մասնագիտական որոշակի հմտություններ: | Դրական փոփոխություններ են արձանագրվել շահառուների առօրյա կյանքում: Ընտանիքների հավաստմամբ և մեր դիտարկումներով նրանք անկաշկանդ շփվում են շրջապատի մարդկանց հետ, կարողանում են ինքնուրույն զբաղվել ինքնախնամքով, օգնում են տնտեսական գործերում: Շահառուները հաճույքով են այցելում Կենտրոն, որտեղ իրենց ազատ ու անկաշկանդ են զգում, մասնակցում են բոլոր պարապմունքներին, ձեռք են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համեմատություններ շահառուների սկզբնական և առկա վիճակի միջև: Յուրաքանչյուր աշխատակից ամսվա վերջում հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքների և շահառուների մոտ եղած փոփոխությունների մասին: | Շահառուների մոտ ամրապնդվել են ինքնախնամքի, ինքնասպասարկման, շրջապատի մաքրության, հիգիենայի, առողջ սննդի և ապրելակերպի հմտությունները: | բերել ընկերներ և հասարակության մեջ ինքնադրսևորման հմտություններ: |
| Ընդամենը շահառուներ՝ 23 | | | | | |
| | | | | | |
| Ազդեցությունը՝ շահառուների մոտ կան նկատելի դրական փոփոխություններ մեծացել է շփման միջավայրը, որտեղ նրանք հանդիպում են տարբեր խառնվածք ունեցող մարդկանց, որոնց հետ կարողանում են չկաշկանդվել, հաղորդակցվել, ընկերանալ: Նրանք արդեն բավականին ակտիվ են, չեն խուսափում հանրային վայրերից: Շահառուները մասնակցելով խմբակների պարապմունքներին ձեռք են բերել իրենց նախասիրություններին համապատասխան մասնագիտական հմտություններ: Զարգացել է ստեղծագործական միտքը և դիզայներական ճաշակը: Կազմակերպվում են շահառուների մասնակցությամբ թեմատիկ միջոցառումներ և մասնակցություն համայնքում անցկացվող հասարակական միջոցառումներին: | | | | | |

Շահառուները Վարդենիս քաղաքում և բնակավայրերում ապրող 18 + հաշմանդամություն ունեցող անձինք են:

Կազմակերպությունը երկար տարիներ աշխատում է հաշմանդամություն ունեցող անձանց հետ, նրանցից ոմանք նախորդ տարիներին ընդգրկված են եղել ծրագրում, մնացած մասնակիցները՝ ուղղորդվել են Վարդենիսի ՄՄԾ-ի կողմից:

*Նախարարություն՝*

*Նախարարության գլխավոր քարտուղար՝*

*Ա. Մանգասարյան*

---------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*

*Կազմակերպություն՝*

*Նախագահ՝ Մ. Եփրեմյան*

---------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*

08413732
Հասարակական Կազմակերպություն
Общественная Организация
Non-Governmental Organization